ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/22

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.07.2017թ. թիվ 03/27-1/13206-17 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2184 գրության հիման վրա, 17.07.2017թ. թիվ 03/27-1/13206-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2184 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/60 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգում 32-րդ, 53-րդ 54-րդ 55-րդ և 77-րդ չափաբաժինների մասով «Մեդիսար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Մեդիսար» ՍՊԸ-ն համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժինների մասով ապրանքների տեխնիկական բնությագրերի քննարկման արդյունքում պարզվեց, որ նրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և համարժեք չեն դրան: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են տեխնիկական բնությագրերի շտկված տարբերակները, սակայն համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության դրանք չեն համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Հիմք ընդունելով կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց 32-րդ, 53-րդ 54-րդ 55-րդ և 77-րդ չափաբաժինների մասով «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Միրաքյան Արմենը:

3. <u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մեդիսար» ՍՊԸ-ն 21.06.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/60 ծածկագրով գնման ընթացակարգի

- 32-րդ չափաբաժնի՝ դոզատոր տարայի 1-10մլ-0,3% ճշտությամբ, բնութագրում առկա է վրիպակ, բազմիցս փորձել են ճշտել մակնիշը, բայց ստույգ պատասխան չեն

ստացել. Ընկերության մասնագետները ուսումնասիրել են և այդպիսի ճշտությամբ 1-10մլ-0,3% դոզատոր չեն հայտնաբերել, քանի որ բնութագիրը ճիշտ տրված չէ: Այդ պատճառով առաջարկել են այլ համարժեք տարբերակ գերմանական Witeg LabMax premium դոզատորը, որի շեղումը 0,06մլ է, որը համապատասխանում է 0,6%-ին:

Խորհրդի կողմից գրությունն ստանալուց հետո Ընկերությունը պարզել է, որ դոզատորի նկարագրությունը գրվել է ոչ թե արտադրող, այլ վաճառող կազմակերպության կայքից և պարզվել է, որ կայքում առկա է սխալ՝ 0,5%-ի փոխարեն գրված է 0,3%:

- 53-ից 55-րդ չափաբաժինները լաբորատոր ապակեղեն են, որոնք ունեն գործարանային փաթեթավորում: Նկարագրությունը ներկայացնելուց տեղի է ունեցել մեխանիկական վրիպակ: Դա ապրանքի որակի և քանակի վրա որևէ ազդեցություն չունի:
- 77-րդ չափաբաժնի համար առաջարկել ենք համարժեք ջերմաչափ /-54,9-ից+329,90 C չափման տիրույթ, ձողի երկարությունը՝ 110 մմ/:

Նշված հայտով պահանջվող ջերմաչափ /-50-ից+350^0 C, ձողի երկարությունը՝ 125մմ/ մասնագետները չեն հայտնաբերել:»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Մանվել Գաբրիելյանը և ներկայացուցիչ՝ Գայանե Գաբրիելյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/22 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.07.2017թ. թիվ 03/27-1/13206-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.07.2017թ. թիվ ԴՎԱ/2184 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/60» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/60» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.04.2017թ. նիստի N 3 և 30.05.2017թ. նիստի N 4 արձանագրությունները, Ընկերության կողմից 27.07.2017թ. ներկայացված գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Մեդիսար» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 21.04.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով որոշել է «Մեդիսար» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 30-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 43-րդ, 44-րդ, 45-ից 57-րդ, 61-րդ, 76-րդ, 77-րդ չափաբաժինների մասով և առաջարկել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 30.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացրած հայտը մերժել է տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների հիմնավորմամբ՝ 30-րդ չափաբաժնով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չի եղել Հրավերով պահանջված ԳՕՍՏ-ը, 32-րդ չափաբաժնով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում պահանջվող «ճշտությունը +/- 0,3% առավելագույն բաշխմամբ» փոխարեն առաջարկվել է «ճշտությունը +/- 0,2% առավելագույն բաշխմամբ» որը գերազանցում է պահանջվող ցուցանիշը, 34-րդ և 35-րդ չափաբաժիններով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում պահանջվող ԳՕՍ 23094-78-ի փոխարեն նշված է ՏՊ 38-105-1058-ը, իսկ 35-րդ չափաբաժնով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է փաթեթավորման վերաբերյալ դրույթը, 35-ից 36-րդ, 38-ից 40-րդ, 43ից -57-րդ չափաբաժիններնով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրերում նշված չի եղել տուփերում առկա ապրանքների քանակները, 77-րդ չափաբաժնով առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափման տիրույթը և ծողի երկարությունը չեն համապատասխանում Հրավերով պահանջվող համապատասխան ապրանքի չափման տիրույթին և ծողի երկարությանը, ինչպես նաև պայմանագիրը չի համարվել նմամատիպ:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը Ընկերությանը ծանուցել է սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է շտկումները, որի վերաբերյալ տրվել է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ 32-րդ, 53-ից 55-րդ և 77-րդ չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/60» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 30-րդ, 32-ից 63-րդ, 76-րդ, 77-րդ չափաբաժիններում նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը (բնութագրերը) համապատասխանում է (են) «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀ ԱՊՁԲ-7/60» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Խորհրդում 27.07.2017թ. կայացած նիստի ժամանակ «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց հետևյալը՝

- 32-րդ չափաբաժնով պահանջված ±0,3 ճշտությամբ սարքավորում (դոզատոր տարա) գոյություն չունի, դա Պատվիրատուի կողմից սխալ է նշվել, քանի որ վերջինս օգտվել է ռուսական nv-lab.ru վաճառող կազմակերպության կայքում առկա տեղեկատվությունից և 0,5%-ի փոխարեն գրվել է 0,3%, ինչը ընդունեց նաև Պատվիրատուի ներկայացուցիչը: Ընկերությունն առաջարկել է այլ համարժեք տարբերակ գերմանական Witeg LabMax premium դոզատորը, որի շեղումը 0,06մլ է, որը համապատասխանում է 0,6%-ին: Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է ±0,2 ճշտությունը և դա ոչ թե առավելագույն ճշտությունն է այլ՝ դոզավորման:
- 53-ից 55-րդ չափաբաժինների առաջարկված (պիպետ) ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված չեն եղել տուփերում առկա ապրանքների քանակները, Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջված գնման ենթակա ապրանքը տուփում 10 հատի փոխարեն Ընկերության կողմից առաջարկվել է՝ տուփում 5 հատ, որը տեղի է ունեցել մեխանիկական վրիպակի արդյունքում և ապրանքի որակի ու քանակի վրա որևէ ազդեցություն չունի:
- 77-րդ չափաբաժնով Ընկերությունն առաջարկել է համարժեք ջերմաչափ /-54,9-ից+329,90 C չափման տիրույթ, ձողի երկարությունը՝ 110 մմ/, իսկ Հրավերով պահանջվող ջերմաչափ /-50-ից+350^{0} C, ձողի երկարությունը՝ 125մմ/ Ընկերության մասնագետները չեն հայտնաբերել:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով

ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

• 49-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.5 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները

հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.teryan@mil.am, է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի 8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են արձանագրված անհամապատասխանությունները:

Խորհուրդն գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող 32-րդ, 53-ից 55-րդ և 77-րդ չափաբաժիններով նշված ապրանքներ տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին և 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում պարտավորվելով ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2017թ. թիվ 03/27-1/13206-17 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ